

Ն Ե Ր Մ Ա Ն Մ Ա Ս Ի Ն

Սովետական հասարակական ու պետական կարգի ամրապնդման, բնակչության բարեկեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման, քաղաքացիների գիտակցականության աճի, իրենց հասարակական պարտքի կատարմանը նրանց ազնիվ վերաբերմունքի շնորհիվ երկրում ամրապնդվել են օրինականությունը և սոցիալիստական իրավակարգը, ինչպես նաև զգալիորեն կրճատվել են հանցագործությունները:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահությունը գտնում է, որ այդ պայմաններում անհրաժեշտություն չկա կալանքի վայրերում այլևս պահելու այն անձանց, որոնք կապարել են պետության համար մեծ վտանգ չենրկայացնող հանցագործություններ և աշխատանքի նկատմամբ իրենց բարեխիղճ վերաբերմունքով ապացուցել են, որ իրենք կարող են վերադառնալ աշխատանքային ազնիվ կյանքի ու դառնալ հասարակության օգտակար անդամներ:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահությունը որոշում է.

1. Կալանքի վայրերից և ազատազրկման հետ չկապված պատժի այլ միջոցներից ազատել ներառյալ մինչև 5 տարի ժամկետով դատապարտված անձանց:

2. Կալանքի վայրերից, անկախ պատժի ժամկետից, ազատել պաշտոնեական ու տնտեսական հանցանքների, ինչպես նաև զինվորական հանցանքների համար դատապարտվածներին, որ նախատեսված են ՌՍՖՍՄ Բրեական Օրենսգրքի 193—4 «ա» կ., 193—7, 193—8, 193—10, 193—10 «ա» կ., 193—14, 193—15, 193—16 և 193—17 «ա» կ. հոդվածներով և մյուս Միութենական ռեսպուբլիկաների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածներով:

3. Պատժի ժամկետից անկախ, կալանքի վայրերից ազատել հետևյալ

դատապարտվածներին. մինչև 10 տարեկան հասակի երեխաներ ունեցող կանանց և հղի կանանց. մինչև 18 տարեկան անչափահասներին, 55-ից բարձր տարիքի տղամարդկանց և 50-ից բարձր տարիքի կանանց, ինչպես նաև անբուժելի ծանր հիվանդություններով տառապող դատապարտվածներին:

4. Կիսով չափ կրճատել 5 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտվածների պատժի ժամկետը:

5. Կարճել մինչև սույն Հրամանագրի հրատարակումը կատարված հանցագործությունների վերաբերյալ բոլոր հետաքննական գործերը և դատարանների կողմից չբնականացված այն գործերը, ա) որոնց համար օրենքով պատժ է նախատեսված մինչև 5 տարի ժամկետով ազատազրկման ձևով կամ պատժի այլ միջոցներով, որ կապված չեն կալանքի վայրերում պահելու հետ.

բ) սույն Հրամանագրի 2-րդ հոդվածում թվարկված պաշտոնեական, տնտեսական և զինվորական հանցագործությունները.

գ) որ կատարել են սույն Հրամանագրի 3-րդ հոդվածում նշված անձինք:

Մինչև սույն Հրամանագրի հրատարակումը կատարված հանցագործությունների վերաբերյալ ուրիշ գործերի նկատմամբ, որոնց համար օրենքով նախատեսված է ազատազրկում 5 տարուց ավելի ժամկետով, դատարանը, եթե անհրաժեշտ գտնի պատժի միջոց ընտրել 5 տարուց ոչ ավելի ազատազրկման ձևով, մեղադրյալին ազատում է պատժից, իսկ եթե դա-

տարանը անհրաժեշտ գտնի պատժի միջոց ընտրել 5 տարուց ավելի ժամկետով ազատազրկման ձևով, — պատժի ժամկետը կրճատում է կիսով չափ:

6. Վերացնել այն քաղաքացիների դատավաճառությունը և ընտրական իրավունքներից զրկված լինելը, որոնք նախկինում դատվել և կրել են պատիժը կամ ժամկետից շուտ պատժից ազատվել են սույն Հրամանագրի հիման վրա:

7. Ներումը չկիրառել այն անձանց նկատմամբ, որոնք դատապարտվել են 5 տարուց ավելի ժամկետով կոնկրետ ղուլտցիոն հանցագործությունների, սոցիալիստական սեփականության խոշոր հափշտակումների, բանդիտիզմի և կանխամտածված սպանության համար:

8. Անհրաժեշտ գտնել վերանայել ՍՍՌՄ և միութենական ռեսպուբլիկաների քրեական օրենսդրությունը, նրկատի ունենալով պաշտոնեական, տնտեսական, կենցաղային և ավելի բիշ վտանգալոր այլ հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունը փոխարինել վարչական ու կարգապահական կարգի միջոցներով, ինչպես նաև մեղմել քրեական պատասխանատվությունը առանձին հանցագործությունների համար:

Հանձնարարել ՍՍՌՄ Արդարադատության մինիստրությանը մեկամսյա ժամկետում մշակել համապատասխան առաջարկներ և դրանք մտցնել ՍՍՌ Միության Մինիստրների Սովետի քրեական օրենսգրքի ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահությանը ներկայացնելու համար:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության նախագահ՝ Կ. ՎՈՐՈՇԻՈՎ

ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության Քարտուպար՝ Ն. ՊԵՏՐՈՎ

Մոսկվա, Կրեմլ
27 մարտի 1953 թ.